ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/4-Ա

ք. Երևան «29» սեպտեմբեր 2020թ.

Ջրային կոմիտեն ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները ժամանակավոր կատարող Ա. Մարգարյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ժիլցո» Ա/Կ-ն, ի դեմս նախագահ Ս. Ավագյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Եղվարդի խճուղու միջնամասից մինչև Հալաբյան փողոցի վերջնամասը ոռոգման ջրագիծ կառուցելու աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 5 ամիս:
աշխատանքների կատարման վերջնաժամկետը

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են նախագծային փաստաթղթերում, որով պետք է առաջնորդվի Կապալառուն / պայմանագրի N 2.1 Հավելվածում/:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.1.1 Կապալառուն ներկայացնում է կատարողական փաստաթղթերի փաթեթը, որը պետք է կազմված լինի տեխնիկական հսկողություն և հեղինակային հսկողություն իրականացնող անձանց մասնակցությամբ:

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 173 504 727 (մեկ հարյուր յոթանասուներեք միլիոն հինգ հարյուր չորս հազար յոթ հարյուր քսանյոթ) ՀՀ դրամ, որից 28 917 454 (քսանութ միլիոն ինը հարյուր տասնյոթ հազար չորս հարյուր հիսունչորս) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 17 350 000 (տասնյոթ միլիոն երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կապալառուին վճարումներ չեն կատարվում:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 21 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Ջրային կոմիտե	«Ժիլյո» Ա/Կ
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա	ք. Երևան, Բագրատունյաց 69
Հ/Հ	հեռ. 091 400758
ՀՎՀՀ 02555816	էլ հասցե՝ serzhik-avagyan@rambler.ru
Կոմիտեի գլխավոր քարտուղարի	Հ/Հ 115004610859
պարտականությունները	Հայբիզնեսբանկ ՓԲԸ
ժամանակավոր կատարող	ՀՎՀՀ 02205353
	նախագահ
Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ	Ս. ԱՎԱԳՅԱՆ
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված թիվ 1
«24» օգոստոսի 2020թ. կնքված
ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/4-Ա ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՂՎԱՐԴԻ ԽՃՈՒՂՈՒ ՄԻՋՆԱՄԱՍԻՑ ՄԻՆՉԵՎ ՀԱԼԱԲՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՎԵՐՋՆԱՄԱՍԸ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԱԳԻԾ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N	Աշխատանքների տեսակները և անվանումը	Չ/Մ	Քանակ	Միավ. գինը	Գումարը
1	2	3	4	5	6
	1-1. Ջրատար I-				
	Հողային աշխատանքներ				
1	Ասֆալտի ծածկույթի երկկողմանի կտրում խրամուղու երկայնքով	մ	3702.0	500	1851000
2	Ասֆալտբետոնե ծածկույթի քանդում հարվածահար մուրճով բարձելով ա/մ և տեղափոխելով մինչև 15կմ հեռ վրա	մ³	273.0	4500	1228500
3	Ասֆալտբետոնե ենթաշերտի քանդում բարձելով ա/մ և տեղափոխելով մինչև 15կմ հեռ վրա	մ³	392.00	4500	1764000
4	Vp կարգի գրունտներ փխրեցում էքսկավատորին ամրացված թրթռիչի միջոցով	մ³	336.2	10000	3362000
5	Խրամուղու մշակում նախապես փխրեցրած Vp կարգի գրունտներում էքսկավատրով բարձելով ա/մ և տեղափոխելով 15կմ	մ³	336.2	1300	437060
6	Խրամուղու մշակում Vp կարգի գրունտներում ձեռքով բարձելով ա/մ և տեղափոխելով 15կմ	մ³	25.3	5000	126500

7	Խրամուղու մշակում V կարգի գրունտներում էքսկավատրով բարձելով ա/մ և տեղափոխելով 15կմ	մ^3	641.0	1300	833300
8	Խրամուղու մշակում V կարգի գրունտներում ձեռքով բարձելով ա/մ և տեղափոխելով 15կմ	մ^3	48.3	5000	241500
9	Խրամուղու մշակում IV կարգի գրունտներում էքսկավատրով բարձելով ա/մ և տեղափոխելով 15կմ	մ^3	877.7	1300	1141010
10	Խրամուղու մշակում IV կարգի գրունտներում ձեռքով բարձելով ա/մ և տեղափոխելով 15կմ	մ^3	66.1	5000	330500
11	Խրամուղու մշակում III կարգի գրունտներում էքսկավատրով բարձելով ա/մ և տեղափոխելով 15կմ	մ^3	376.1	800	300880
12	Խրամուղու մշակում III կարգի գրունտներում ձեռքով բարձելով ա/մ և տեղափոխելով 15կմ	մ^3	26.5	5000	132500
13	Խրամուղու մշակում III կարգի գրունտներում էքսկավատրով կողալիցքով	մ^3	49.9	800	39920
14	Խրամուղու մշակում III կարգի գրունտներում ձեռքով կողալիցքով	մ^3	3.8	5000	19000
15	Խրամուղու մշակում II կարգի գրունտներում ձեռքով (հողաբուսական ծածկույթ)	մ^3	29.9	5000	149500
16	Ավազի նախապատրաստական շերտի իրականացում 10սմ հաստ.	մ^3	161.2	5284	851781
17	Պաշտպանիչ շերտի իրականացում կողալիցքի փափուկ գրունտներից	մ^3	53.7	2000	107400
18	Պաշտպանիչ շերտի իրականացում ավազով	մ^3	964.7	4500	4341150

19	Խրամուղու հակադարձ լիցքի իրականացում ավազով	մ³	834.1	4000	3336400
20	Խրամուղու հետլիցք կողալիցքի մշակված գրունտներից, տոփանումով	մ³	53.50	500	26750
21	Հողաբուսական ծածկույթի վերականգնում կողալիցքի գրունտներից	մ³	29.9	3000	89700
22	Խճի նախապատրաստական շերտի իրականացում, h=15սմ հաստությամբ	մ²	2776.5	900	2498850
23	Խճային հիմքի վերին 4սմ հաստությամբ շերտի հագեցում բիտումով 4,12կգ/մ²	կգ	11439.2	30	343175
24	Խոշորհատիկ ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում, h=6սմ հաստությամբ	մ²	2776.5	4300	11938950
25	Մանրահատիկ ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում, h=4սմ հաստությամբ	մ²	2776.5	2300	6385950
26	Բազալտե եզրաքարերի քանդում	մ	12.0	5000	60000
27	Բազալտե եզրաքարերի վերականգնում բետոնե հիմքով	մ	12.0	12000	144000
28	Չիմապատում	մ²	154.5	2000	309000
	Ընդամենը				**42,390,276.2**
	Տեխնոլոգիական աշխատանքներ				
1	Պողպատե (St) DN530x6, էլ. եռակցվող խողովակների մոնտաժում, փորձարկումով	մ	1954.0	39000	76206000
2	Պողպատե խողովակի ձևավոր մասեր ծունկ, DN500-9հատ	կգ	269.3	1500	403929
3	DN500մմ պողպատե խողովակի եզրերի երկկողմանի կտում, հարթեցում և հղկում անկյունային շեղ միացման համար	տեղ	14	15000	210000

4	Պողպատե խողովակների և ձևավոր մասերի երկշերտ յուղաներկում	մ²	2.0	1000	2000
5	Պողպատե խողովակի DN530մմ ուժեղացված հակակոռոզիոն հիդրոմեկուսացում	մ	1954.0	800	1563200
	Ընդամենը				**78,385,128.6**
	Փականային հանգույց ՓՀ-1				
	Հողային աշխատանքներ				
1	Խրամուղու մշակում V կարգի գրունտներում էքսկավատրով բարձելով ա/մ և տեղափոխելով 15կմ	մ³	1.2	1300	1560
2	Խրամուղու մշակում V կարգի գրունտներում էքսկավատրով կողալիցքով	մ³	3.9	1300	5070
3	Խրամուղու մշակում V կարգի գրունտներում ձեռքով կողալիցքով	մ³	0.8	5000	4000
4	Խրամուղու հետլիցք կողալիցքի մշակված գրունտներից, տոփանումով	մ³	4.70	500	2350
	Ընդամենը				**12,980.0**
	Տեխնոլոգիական աշխատանքներ				
1	Սողնակ DN500մմ	հատ	1	600000	600000
2	DN500մմ PN1.6ՄՊա, կացաշուրթային ճկուն ներդիրի մոնտաժում	հատ	1	200000	200000
3	DN500մմ, PN1.6ՄՊա, պողպատե էլ. եռակցվող կցաշուրթերի մոնտաժում	հատ	2	35000	70000
4	DN600-500մմ խողովակների միացում էլ. Եռակցմամբ	տեղ	1	25000	25000

5	Բետոն հենարանների իրականացում B15 դասի բետոնով	մ^3	0.04	70000	2800
6	Պողպատե խողովակների և ձևավոր մասերի երկշերտ յուղաներկում	մ^2	5.2	1000	5200
7	Նախաշերտ B7,5 դասի բետով	մ^3	0.68	70000	47600
8	Ե/բետոնե կլոր հորի պատրաստում հավաքովի էլեմենտներից D=2,0մ, Հբ=1,8մ, (բետոն-2,32մ^3,ամրան 160,1կգ-1հորի համար) թուջե կափարիչի և աստիճանի մոնտաժումով	մ^3	2.32	180000	417600
9	Թուջե մտոց	հատ	1	80000	80000
10	Ե/բ դիտահորերի ներդիր դետալներ	կգ	8.70	600	5220
11	Մետաղական աստիճանի արժեքը	կգ	18.5	600	11100
	Ընդամենը				**1,464,520.0**
	Ջրաչափական հանգույց ՋՉՀ-1				
	Հողային աշխատանքներ				
1	Խրամուղու մշակում V կարգի գրունտներում էքսկավատրով բարձելով ա/մ և տեղափոխելով 15կմ	մ^3	1.0	1500	1500
2	Խրամուղու մշակում V կարգի գրունտներում էքսկավատրով կողալիցքով	մ^3	3.0	1500	4500
3	Խրամուղու մշակում V կարգի գրունտներում ձեռքով կողալիցքով	մ^3	0.7	5000	3500
4	Խրամուղու հետլիցք կողալիցքի մշակված գրունտներից, տոփանումով	մ^3	3.70	500	1850
	Ընդամենը				**11,350.0**
	Տեխնոլոգիական աշխատանքներ				

1	DN426x5մմ պողպատե խողովակների մոնտաժում փորձարկումով	մ	6.0	35000	210000
2	Ոլորաձայնային հոսքաչափ DN400մմ	հատ	1	1400000	1400000
3	Կցաշուրթ DN400մմ, PN1.6ՄՊա	հատ	2	35000	70000
4	Պողպատե խողովակի ձևավոր մասեր, DN400-500 2հատ	կգ	90.0	600	54000
5	Պողպատե խողովակների և ձևավոր մասերի երկշերտ յուղաներկում	մ^2	3.1	1000	3100
6	Նախաշերտ B7,5 դասի բետով	մ^3	0.45	70000	31500
7	Ե/բետոնե կլոր հորի պատրաստում հավաքովի էլեմենտներից D=1,5մ, Hբ=1,8մ, (բետոն-1,45մ3,ամրան 80,8կգ-1հորի համար) թուջե կափարիչի և աստիճանի մոնտաժումով	մ^3	1.45	170000	246500
8	Թուջե մտոց	հատ	1	80000	80000
9	Ե/բ դիտահորերի ներդիր դետալներ	կգ	8.70	600	5220
10	Մետաղական աստիճանի արժեքը	կգ	18.5	600	11100
	Ընդամենը				**2,111,420.0**
	Փականային հանգույց ՓՀ-2				
	Հողային աշխատանքներ				
1	Խրամուղու մշակում V կարգի գրունտներում էքսկավատրով բարձելով ա/մ և տեղափոխելով 15կմ	մ^3	1.2	1300	1560
2	Խրամուղու մշակում V կարգի գրունտներում էքսկավատրով կողալիցքով	մ^3	3.9	1300	5070
3	Խրամուղու մշակում V կարգի գրունտներում ձեռքով կողալիցքով	մ^3	0.8	5000	4000

4	Խրամուղու հետլիցք կողալիցքի մշակված գրունտներից, տոփանումով	մ³	4.70	500	2350
	Ընդամենը				12980
	Ընդամենը տոկոսներով արտահայտված				0
	Տեխնոլոգիական աշխատանքներ				
1	Սողնակ DN500մմ	հատ	1	800000	800000
2	DN500մմ PN1.6ՄՊա, կացաշուրթային ճկուն ներդիրի մոնտաժում	հատ	1	35000	35000
3	DN500մմ, PN1.6ՄՊա, պողպատե էլ. եռակցվող կցաշուրթերի մոնտաժում	հատ	2	15000	30000
4	Պողպատե խողովակի ձևավոր մասեր, DN500 2հատ	կգ	75.0	600	45000
5	DN600-500մմ խողովակների միացում էլ. Եռակցմամբ	տեղ	1	25000	25000
6	Բետոն հենարանների իրականացում B15 դասի բետոնով	մ³	0.04	70000	2800
7	Պողպատե խողովակների և ձևավոր մասերի երկշերտ յուղաներկում	մ²	5.2	1000	5200
8	Նախաշերտ B7,5 դասի բետով	մ³	0.68	70000	47600
9	Ե/բետոնե կլոր հորի պատրաստում հավաքովի էլեմենտներից D=2,0մ, Hբ=1,8մ, (բետոն-2,32մ3,ամրան 160,1կգ-1հորի համար) թուջե կափարիչի և աստիճանի մոնտաժումով	մ³	2.32	180000	417600
10	Թուջե մտոց	հատ	1	80000	80000
11	Ե/բ դիտահորերի ներդիր դետալներ	կգ	8.70	600	5220

12	Մետաղական աստիճանի արժեքը	կգ	18.5	600	11100
	Ընդամենը /				**1,504,520.0**
	Դատարկման հանգույց ԴՀ-1			0.00	0
	Հողային աշխատանքներ			0	
1	Ասֆալտի ծածկույթի երկկողմանի կտրում խրամուղու երկայնքով	մ	24.0	500	12000
2	Ասֆալտբետոնե ծածկույթի քանդում հարվածահար մուրճով բարձելով ա/մ և տեղափոխելով մինչև 15կմ հեռ վրա	$մ^3$	1.8	4500	8100
3	Ասֆալտբետոնե ենթաշերտի քանդում բարձելով ա/մ և տեղափոխելով մինչև 15կմ հեռ վրա	$մ^3$	2.70	4500	12150
4	Խրամուղու մշակում V կարգի գրունտներում էքսկավատրով բարձելով ա/մ և տեղափոխելով 15կմ	$մ^3$	21.3	1500	31950
5	Խրամուղու մշակում IV կարգի գրունտներում էքսկավատրով բարձելով ա/մ և տեղափոխելով 15կմ	$մ^3$	2.7	1500	4050
6	Ավազի նախապատրաստական շերտի իրականացում 10սմ հաստ.	$մ^3$	1.1	4500	4950
7	Պաշտպանիչ շերտի իրականացում ավազով	$մ^3$	3.4	4500	15300
8	Խրամուղու հակադարձ լիցքի իրականացում ավազով	$մ^3$	18.0	4500	81000
9	Խճի նախապատրաստական շերտի իրականացում, h=15սմ հաստությամբ	$մ^2$	18.0	1200	21600
10	Խճային հիմքի վերին 4սմ հաստությամբ շերտի հագեցում բիտումով 4,12կգ/$մ^2$	կգ	74.2	30	2224.8

11	Խոշորհատիկ ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում, h=6սմ հաստությամբ	մ²	18.0	4500	81000
12	Մանրահատիկ ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում, h=4սմ հաստությամբ	մ²	18.0	2500	45000
	Ընդամենը				**319,324.8**
	Տեխնոլոգիական աշխատանքներ				
1	DN114x4 Պողպատե (St) էլ. եռակցվող խողովակների մոնտաժում, փորձարկումով	մ	12.0	3000	36000
2	DN100 PN=1,6ՄՊա սողնակի մոնտաժում	հատ	1	25000	25000
3	Կցաշուրթային ճկուն ներդիր DN100 PN=1,6ՄՊա	հատ	1	2000	2000
4	DN100 PN=1,6ՄՊա Պողպատե էլ եռակցվող կցաշուրթերի մոնտաժում	հատ	2	1000	2000
5	DN600-100 պողպատե խողովակների միացում էլ. Եռակցմամբ	տեղ	1	11000	11000
6	Բետոնե հենարանի իրականացում B15 դասի բետոնից	մ³	0.030	35000	1050
7	Պողպատե խողովակի ձևավոր մասերի երկտակ ներկում	մ²	1.5	500	750
8	DN100 պողպատե խողովակների և ձևավոր մաերի ուժեղացված հակակոռոզիոն մեկուսացում	մ	12.0	1000	12000
9	Նախաշերտ B7,5 դասի բետով	մ³	0.26	30000	7800

10	Ե/բետոնե կլոր հորի պատրաստում հավաքովի էլեմենտներից D=1,0մ, Hբ=1,8մ, (բետոն-0.76մ³,ամրան 30,4կգ-1հորի համար) թուջե կափարիչի և աստիճանի մոնտաժումով	մ³	0.76	80000	60800
11	Թուջե մտոց	հատ	1	50000	50000
12	Ե/բ դիտահորերի ներդիր դետալներ	կգ	8.70	600	5220
13	Մետաղական աստիճանի արժեքը	կգ	18.5	600	11100
	Ընդամենը				**224,720.0**
	Այդ թվում սարքավորումներ				**126,437,219.6**
	Շահույթ-11%				**13,908,094.2**
	Ընդամեն				**140,345,313.7**
	Չնախատեսված ծախսեր-1,5%				**2,105,179.7**
	Ընդամենը				**142,450,493.4**
	Չնախատեսված ծախսեր-1,5%				**2,136,757.4**
	Ընդամեն				**144,587,250.8**
	ԱԱՀ -20%				**28,917,450.2**
	Ընդամենը ներառյալ ԱԱՀ				**173,504,701.0**

Կապալառուն աշխատանքները կատարում է «Երևան քաղաքի Եղվարդի խճուղի» հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
Հ/Հ
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղարի
պարտականությունները
ժամանակավոր կատարող

_____ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Ժիլյո» Ա/Կ
ք. Երևան, Բագրատունյաց 69
հեռ. 091 400758
էլ հասցե՝ serzhik-avagyan@rambler.ru
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/Հ 115004610859
ՀՎՀՀ 02205353
նախագահ

_____ Ս. ԱՎԱԳՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
«24» օգոստոս 2020թ. կնքված
ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/4-Ա ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՂՎԱՐԴԻ ԽՃՈՒՂՈՒ ՄԻՋՆԱՄԱՍԻՑ ՄԻՆՉԵՎ ՀԱԼԱԲՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՎԵՐՋՆԱՄԱՍԸ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԱԳԻԾ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

համաձայն նախագծային փաստաթղթերի

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՂՎԱՐԴԻ ԽՃՈՒՂՈՒ ՄԻՋՆԱՄԱՍԻՑ ՄԻՆՉԵՎ ՀԱԼԱԲՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՎԵՐՋՆԱՄԱՍԸ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԱԳԻԾ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**	*ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը*	5 ամիս
1.1	Շինարարական աշխատանքների նախապատրաստական աշխատանքներ		20 օր
1.2	Քանդման աշխատանքներ		90 օր
1.3	Կառուցման աշխատանքներ		45 օր
1.4	Հայտնաբերված թերությունների վերացման, տարածքի մաքրման աշխատանքներ		28 օր
1.5	Անհրաժեշտ փաստաթղթերի նախապատրաստում, շահագործման հանձնում		10 օր
ԸՆԴԱՄԵՆԸ			**5 ամիս**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
Հ/Հ
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղարի
պարտականությունները
ժամանակավոր կատարող

Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Ժիլյո» Ա/Կ
ք. Երևան, Բագրատունյաց 69
հեռ. 091 400758
Էլ հասցե՝ serzhik-avagyan@rambler.ru
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/Հ 1150046108 59
ՀՎՀՀ 02205353
նախագահ

Մ. ԱՎԱԳՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2.1
« 29 » օգոստոս 2020թ. կնքված
ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/4-Ա ծածկագրով պայմանագրի

Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին

Հ/Հ	Նյութերի տեսակները	Երաշխիքային նվազագույն ժմկետ (տարի)
1	Մետաղ	30
2	Խողովակ	30
3	Բետոն	30
4	Արմատուրաներ	20
	սարքերի ու սարքավորումներ	
1	Սողնակ DN500մմ	16 ամիս
2	DN500մմ PN1.6ՄՊա, կացաշուրթային ճկուն ներդիրի մոնտաժում	16 ամիս
3	Ոլորաձայնային հոսքաչափ DN400մմ	16 ամիս
4	DN100 PN=1,6ՄՊա սողնակի մոնտաժում	16 ամիս
5	Կցաշուրթային ճկուն ներդիր DN100 PN=1,6ՄՊա	16 ամիս

Կապալառու կազմակերպությունը 1 տարի երաշխիքային ժամկետում պարտավոր է վերացնել թերությունները իր կողմից իրականացված աշխատանքներում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
Հ/Հ
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղարի
պարտականությունները
ժամանակավոր կատարող

_____ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Ժիլյո» Ա/Կ
ք. Երևան, Բագրատունյաց 69
հեռ. 091 400758
Էլ հասցե՝ serzhik-avagyan@rambler.ru
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/Հ115004610859
ՀՎՀՀ 02205353
Նախագահ

_____ Ս. ԱՎԱԳՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«29» օգոստոսի 2020թ. կնքված
ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/4-Ա ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*					
			օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231126/505	Ոռոգման խողովակաշարերի կառուցման աշխատանքներ	... %	... %	... %	... %	... %	... %

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
Հ/Հ
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղարի
պարտականությունները
ժամանակավոր կատարող

Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Ժիլյո» Ա/Կ
ք. Երևան, Բագրատունյաց 69
հեռ. 091 400758
էլ հասցե՝ serzhik-avagyan@rambler.ru
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/Հ115004610859
ՀՎՀՀ 02205353
նախագահ

Ս. ԱՎԱԳՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
«24» օգոստոսի 2020թ. կնքված
ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/4-Ա ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«24» օգոստոսի 2020թ. կնքված
ՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/4-Ա ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն